



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 10 » 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 271 - 24

Նախաձեռնող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի փողոց 1

Գործունեությունը՝

Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրում
նախապեսվող միջնակարգ դպրոցի կառուցում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 271 - 24

« 10 » դեկտեմբեր 2024թ.

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/«Բ» կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք,
Վանանդ բնակավայր

Ներածական մաս. Միջնակարգ դպրոցի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրում՝ Պ. Սևակի փողոց 6-րդ դպրոց հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն առաջադրանքի՝ Արմավիրի մարզի Վանանդ գյուղի դպրոցը նախագծվել է N 19092024-04-0014 և N 13092024-04-0020 սեփականության վկայականների հողատարածքում, որոնց ընդհանուր գումարային մակերեսը կազմում է 1.8933 հա: Գործող դպրոցի մասնաշենքը պահպանվելու է, իսկ նրան կից կաթսայատան շինությունը քանդվելու է: Տարածքը պարսպապատվելու է, նախատեսելով երկու մուտք՝ արևելյան և հարավային ճակատներից: Հողամասի հարավային ճակատում գոյություն ունի ևս մեկ մուտք, որը սպասարկում է գոյություն ունեցող դպրոցին և մանկապարտեզին: Տարածքում նախատեսվում է նաև բաց պարսպապատ մարզադաշտ՝ հանդիսատեսի նստատեղերով, նոր կաթսայատուն, մաքրման կայան՝ իրենց ջրիվազք ավազանով, որը ծառայելու է նաև ոռոգման համար, նաև մեկ հակահրդեհային ջրավազան: Հողամասում առկա է նաև ապաստարանից ելք՝ տեղադրված դպրոցի մասնաշենքից 10 մ հեռավորամբ: Դպրոցին կից եզրամայթը և կենտրոնական մուտքի մոտեցումը նախատեսվում է իրականացնել դեկորատիվ բետոնե սալիկներով, իսկ մնացած ճանապարհները, որոնք հանդիսանում են հրշեջ և այլ հատուկ մեքենաների մոտեցում՝ ասֆալտապատ, մնացած տարածքը նախատեսված է կանաչապատել: Տարածքում նախատեսված է նաև լուսավորության համակարգ: Անձրևաջրերի հեռացումը նախատեսվում է կազմակերպված, թեքությունների հաշվին ուղղել դեպի կանաչապատ



տարածքներ՝ հեղեղատար համակարգի բացակայության պատճառով: Դպրոցի մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է 3666 քմ, իսկ կանաչապատ տարածքների գումարային մակերեսը նախատեսվում է 6384 քմ, որից պահպանվելու է 1942 քմ, համաձայն կանաչապատման նախագծի, կանաչապատման մակերեսը կազմում է 4442 քմ: Համաձայն նախագծի՝ դպրոցը նախատեսվում է կառուցել 432 աշակերտի համար: Դպրոցը երկհարկանի է, առկա է նաև նկուղային հարկ, որը ծառայում է նաև որպես ժամանակավոր թաքստոց-ապաստարան: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված են 1-ինից մինչև 5-րդ դասարանների 2-ական լսարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն՝ իրենց ընդունարաններով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճն՝ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասարահը ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոնը: Երկրորդ հարկում առկա են նաև պատշգամբներ: Հարկում տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանների լսարանները, երկու լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության, քիմիայի մասնագիտացված լսարան՝ իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարան՝ իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճ՝ իրեն սպասարկող սենյակների խմբով, 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Դպրոցն ունի 36.6 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարող բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջնորմները նախատեսված են 200x400x200 թեթև բետոնի բլոկներից՝ համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3,5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն 7 մ x 7 մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48 քմ: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3 մ: Երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 4.5 մ: Ջրահեռացումները նախատեսվում է իրականացնել կազմակերպված: Տանիքների թեքությունը կազմում է 7 աստիճան, երկշերտ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ մանրավազով, գույնը՝ մուգ մոխրագույն: Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ: Կառույցի արտաքին պատերն իրենցից ներկայացնում են 20 սմ ե/բ կոշտություններ, արտաքին 10 սմ ջերմամեկուսիչ շերտ և 30 սմ հաստությամբ տրավերտինե երեսպատում՝ Ց/Ա շաղախով ամրանային ցանցի վրա: Տարածքում նախատեսվում է նաև բաց պարսպապատ մարզադաշտ, նոր կաթսայատուն, վազբուղի, երկու մաքրման կայաններ իրենց ջրհավաք կայանով, նաև մեկ հակահրդեհային ջրավազան:

Դպրոցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասերի ընդհանուր մակերեսը՝ 18933 քմ,



- կառուցապատման մակերեսը՝ 3666 քմ,
- կանաչապատման մակերեսը՝ 6384 քմ,
- ասֆալտապատում՝ 1777 քմ,
- բետոնե դեկորատիվ սալիկներ՝ 1368 քմ,
- բաց մարզադաշտ՝ 1170 քմ:

Էլեկտրամատակարարման և ջրամատակարարման համար կառուցապատողը դիմելու է լիազորված մարմիններին՝ համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար: Դպրոցում նախատեսված է ջրային ջեռուցում, երկխողովականի, համընթաց շարժումով, ջրի մեխանիկական շրջանառությամբ համակարգ: Համաձայն նախագծի՝ կաթսայատունը նախագծվել է 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար: Շինությունը 1 հարկանի է, հատակագծում ունի 6 մ x 9 մ առանցքային չափեր: Արտաքին պատերը նախատեսվում են իրականացնել 2 շարք 200 մմ-անոց բետոնե բլոկներով, պատերը նախատեսվում է ջերմամեկուսացնել 40 մմ XPS տեսակի ջերմամեկուսիչով: Տանիքը միալանջ է՝ դեպի հետին մաս թեքությամբ: Տանիքի վերին շերտերը նախատեսվում է իրականացնել 2 շերտ փափուկ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ ծածկույթով: Ջրահեռացումն ազատ է: Շենքի առաջին հարկում գտնվում են գլխավոր նախամուտքը՝ պարետի սենյակով, վարչական և ուսումնական սենյակներ: Նույն հարկում նախատեսված է հաշվիչ տեխնիկայի և ռազմագիտության, տնարարության և գործվածքների մշակման, մետաղամշակման և փայտամշակման ուսումնարարական կաբինետներ՝ տեսական և գործնական դասընթացների համար: Արվեստանոցը կահավորված է լինելու անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով: Դպրոցն ապահովված է բժշկի կաբինետով, ավանդական և համակարգչային գրադարանով, գրապահոցով և ընթերցասրահով, որտեղ տեղադրվելու են համակարգիչներ և պատճենահանման սարքավորում: Առաջին հարկում նախատեսված է մարզասրահ՝ հանդերձարաններով և սանհանգույցով, մարզիչի առանձնասենյակ և պահեստ: Դահլիճը օգտագործվելու է ֆիզիկական վարժությունների և սպորտային խաղերի համար: Շենքի երկրորդ հարկում նախատեսված են ուսումնական սենյակներ, ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի կաբինետներ՝ իրենց լաբորատորիաներով, որոնք կահավորված են ցուցադրական և աշակերտական լաբորատոր սեղաններով, որտեղ տեղադրված են էլեկտրական վարդակներ: Նախատեսված է օտար լեզվի ուսումնական սենյակներ: Երկրորդ հարկում գտնվում է հանդիսությունների դահլիճը՝ 307 տեղով իր հանդերձարաններով, երգի, երաժշտական և պարարվեստի խմբակով: Դպրոցի առաջին հարկում նախատեսված է ճաշարան, որը սպասարկում է 432 աշակերտների: Ճաշարանը նախատեսված է երեխաներին տաք սնունդ ապահովելու համար:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել,
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի) գնում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ



ծածկով մեքենաներով,

- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան, որը տեղադրվելու է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա, պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ,
- ոռոգման համակարգը սնվելու է տարածքում նախատեսված ռեզերվուարից,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադբից,
- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման նպատակով հետևյալ մշտադիտարկումները՝ մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx)



որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 350000 ՀՀ դրամ:


Պատճառաբանական մաս. Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լույս, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Նախատեսվող դպրոցի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 15-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մայիսի 6-ի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» N 138 հրամանի պահանջները:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել



աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Շինհրապարակի արտաքին տարածքը ժամանակավոր ցանկապատել, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:
- Շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ՝ փոշու տարածումը կանխող ցանցով:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ջրցանի պարտադիր իրականացումը:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:
- Բացառել շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները հարակից տարածքներում),
- Ապահովել աղմուկի և թրթռումների մակարդակի վերահսկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ապահովել հաշվետվությամբ ներկայացված բոլոր բնապահպանական միջոցառումների իրականացումը (օդի որակ, հողային և ջրային ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ և այլն):

ԵԶՐԱՓՈՒԿ ԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Ներսիս Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան